



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՎԱՆԻ



այոց պատմությունից հայտնի է, որ Ռուբինյան թագավորության բարձրագույն հետո համազգային ընդհանրական հայրապետական Աթոռն առժամանակ մրնաց Կիլիկիայում: Բայց երբ չքացավ քաղաքական իշխանության վերականգնման ակնկալությունը, ժամանակի բանիմաց անձանց ջանքերով ընդհանրական հայրապետական Աթոռը 1441 թվին Կիլիկիայից փոխադրվեց իր բնիկ վայրը՝ Ս. Էջմիածին:

Բնավ մխիթարական չէին այն ժամանակները նաև Արևելահայաստանում տիրող քաղաքական պայմանները: Երկար տևեց խավարի ու բռնությունների այդ ժամանակաշրջանը. բռնություններ, որոնք իրենց գաղաթնակետին հասան XVII դարի սկզբներին՝ Շահ Աբասի արշավանքների ժամանակ: Այդ ժամանակաշրջանում մեր երկրում տիրող ընդհանուր իրադրության մասին գաղափար կազմելու համար բերում ենք մի հատված Հոհանիսիկ վարդապետի համառոտ պատմությունից (որը, որպես հավելված, կցված է Սամվել Անեցու հավաքմունքին, էջ 185—186):

«Արդ, վշտաշատ ժամանակիս նեղության և դառնության մասին ո՞վ կարող է գրել, ո՞վ եղբայրներ... Մահմեդական ազգերը, որոնք գրավել էին հայոց գավառները, ավերել ու գերել բոլոր շեն և ավերակ վայրերը, տիրել ու բնակվում էին բոլոր տեղերում և անշափ ու այնքան խիստ էր նրանց հարկի լուծը, որ շատերը զրկված ստացվածքներից ու հայրենի ժառանգություններից, դարձյալ չէին կարողանում ազատվել, այլ և հնար չկար փախչելու և թաղնվելու. բայց ամեն մարդ տարակուսանքի մեջ էր. և երանի էին տալիս մեռածներին և ոչ թե կենդանի մնացածներին,

որովհետև ոչ թե կարճ ժամանակով էր նրանց բռնությունը գավառների վրա, այլ բազում և երկար տարիներով: Եվ այն հայրերի որդիները, որոնք նրանց ծառայության լծի տակ էին ընկել, սրանք էլ որդիներ ծնան և որդոց որդիներ, մինչև շատ սերունդներ, բոլորն էլ ստրկության մեջ, որին վերջ չկա: Այլևս մխիթարություն գոյություն չունի հայկածին ազգիս մեջ, այլ դեռևս կանք գլխակոր նրանց չար ծառայության ներքո և հայրենի գավառներից արտաքսված, ցիրուցան ենք եղած աշխարհի զանազան կողմերում, իսկ իշխանազուններն ու ազատածինները ծառա են դարձել մահմեդական ազգին: Այլ և մեր եկեղեցիները ոտնակոխ են եղել այլազգիների կողմից. քանդվածների քարերը տանում էին բերդեր շինելու համար, իսկ շեն մնացածները պղծագործության առարկա էին դարձել նրանց համար. նրանց երկվարներն ու շորիները պարում էին այնտեղ: Եվ մենք գլխակոր կանգնած, լցված ենք բազում տաքակուսանքներով այսպիսի աղետալի կսկծախճների համար և ոչ մի տեղից չի երևում օգնականության հնար:

Բայց ամեն ինչ վախճան ունի աշխարհի վրա. անցավ Շահ Աբասի մրրիկն ու ինքն էլ անհետացավ պատմության թատերաբեմից: Հայոց երկիրը մի պահ սկսեց ազատ շունչ քաշել. երկրի հետ միասին ազատ շունչել սկսեց նաև Մայր Աթոռը:

Ժամանակի հաջող բերմունքով XVII դարի առաջին քառորդից, սկսած Մովսես Տաթևացուց, մի շարք արժանավոր գահակալներ բազմեցին Ամենայն Հայոց հայրապետական գահի վրա. սրանց օրով շենացավ, կենդանացավ, պայծառացավ և լույսի ու հույսի փարոս դարձավ Մայր Աթոռը: Ամենուրեք՝ Սպահան, Ջնդկաստան, Ղրիմ, Պո-

լիս, Լեհաստան, Իտալիա, Հոլանդիա ցըրված հայություն համար առանձին սիրո, գուրգուրանքի, հոգևոր ու բարոյական մալթարության աղբյուր էր հանդիսանում բնիկ հայրենի հարազատ հողի վերահաստատված Մայր Աթոռը:

Հեռավոր այդ գաղութներում ցրված հայությունը միշտ նյութական մեծ աշակցություն էր ցույց տալիս Մայր Աթոռից իրենց այցելության եկած Ամենայն Հայոց հայրապետների նվիրակներին: Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և Հեռավոր գաղութների հայության կապը օրըստօրե ավելի ու ավելի էր ուժեղանում, փոխարկվելով խանդավառ սիրո, կարոտի ու տենչի զգացմունքների: Ս. Էջմիածնի բարոյական ազդեցությունը և ընդհանրական հայրապետի հոգևոր իշխանության վեհությունը պարսկական օտարազգի դաժան տիրապետության ու հայրենիքի ստրկական միճակի պայմաններում էլ ավելի գրավիչ էին դարձնում հայության միակ կենտրոնի հմայքը:

ՍԻՄԵՈՆ ՆՐԵՎԱՆՅՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՁԵՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԾԾՎԵԼԸ (1710—1763)

Սիմեոն Ա կաթողիկոսը ծնվել է Երևանում 1710 թվին: Իր կրթությունն ստացել է Էջմիածնի դպրոցում, ուր և ուսուցիչ է կարգվել ուսման դասընթացն ավարտելուց հետո: Իր գործունեության այս շրջանում Սիմեոն Նրեվանյան մի շարք զարգացած ու նշանավոր հոգևորականներ է պատրաստում, որոնք հետագայում պարծանքով էին հիշում, որ իրենք աշակերտել են Երևանցուն: Այնուհետև Սիմեոն Նրեվանյան տեսնում ենք Բագրևաշում՝ Հարություն Զուլալյանցի եպիսկոպոսի մոտ՝ նվիրակի օգնականի պաշտոնով: Հարություն եպիսկոպոսը այնքան է հավանում ու զնահատում Երևանցուն, որ երբ Ղազար Զահկեցի կաթողիկոսը առաջարկում է նրան Հնդկաստան գնալ նվիրակի պատասխանատու պաշտոնով, ապա նա ցանկություն է հայտնում Սիմեոն սարկավազին էլ իբրև օգնական իր հետ տանելու, նախապես մտադրված լինելով նրան կուսակրոն քահանա ձեռնադրելու. սակայն Ղազար Զահկեցի կաթողիկոսը ուզում էր, որ Հարություն եպիսկոպոսը իր հետ Հնդկաստան տաներ թմբաբերետներ ու գեղեցիկ մարդ, որպիսին չէր Սիմեոն Նրեվանյան, կերպարանքով ոչ գեղատեսիլ և մորուքով հույժ աղքատ, որի համար էլ ստացել էր քոշ (արու այծ) կամ քյոսա մակդիրը:

Հարություն եպիսկոպոսի անակնկալ մահը

Այդ հմայքը տիրապետող էր հանդիսանում նաև ամբողջ XVIII դարի ընթացքում, երբ Արևելահայաստանը, կտրված լուսավոր Արևմուտքից, շարունակում էր հնծալ արևելյան բռնակալների ծանր լծի ներքո. Էջմիածնի գահակալները չէին կարող հանդուրժել պարսկական անիրավությունները և խորը դիտակեցելով Մայր Աթոռի համազգային նշանակությունը, պայքարում էին շրջապատող մահմեդական խավարամոլության, բռնությունների ու կեղեքումների դեմ:

Այդ կարգի գահակալների թվին էր պատկանում Սիմեոն Ա. կաթողիկոսը, որի բազմակողմանի գործունեությունը համառոտակի ուրվագծելու համար օգտվել ենք՝ ա) այն հավելվածից, որ Սիմեոն Նրեվանյան «Ջամբու»-ի մեջ մտցվել է նրա մասին իր մահվանից հետո, բ) Շահխաթունյանի «Ստորագրութեան» Ա. հատորից և գ) Մաղաթիա արքեպիսկոպոս Օրմանյանի «Աղգապատում»-ի երկրորդ մասից:

պատճառ է լինում, որ Սիմեոն Նրեվանյան ձեռնադրությունը հետաձգվի: Վերջում Ղազար Զահկեցի կաթողիկոսը համաձայնում է Սիմեոն Նրեվանյան, որպես նվիրակ, Հնդկաստան ուղարկել սարկավազի աստիճանով: 1743 թվին Նրեվանյան ուղևորվում է Հնդկաստան: Այստեղ երեք ու կես տարի մնալով նա այնպիսի մեծ հռչակ է ձեռք բերում հնդկահայերի մեջ, որ վերջիններս նրան առատ նվերներով Էջմիածին վերադարձնելով, մի առանձին խնդրագրով էլ դիմում են Ղազար Զահկեցի կաթողիկոսին՝ խնդրելով Սիմեոն սարկավազին քահանայացի և ապա վարդապետական կոչում ընծայելով ետ ուղարկել իրենց մոտ Հնդկաստան: Ղազար Զահկեցի կաթողիկոսը վերին աստիճանի գործնալով Երևանցուն առաքելությունից, անմիջապես կատարում է հնդկահայերի խնդիրը ու 1747 թվին ինքն անձամբ Սիմեոն Նրեվանյան կուսակրոն քահանա ձեռնադրում և ապա վարդապետական կոչում շնորհում: Հետագայում սակայն հանգամանքներն այնպես են դասավորվում, որ Սիմեոն վարդապետն այլևս չի կարողանում Հնդկաստան վերադառնալ, այլ ուղևորվում է նախ Կարին ու ապա այնտեղից էլ Պոլիս, ուր շատ լավ ընդունվելով լուսավոր է գտնում իր ուսումնական համըայունները շնորհիվ:

Պոլսահայերի թախանձանքով նա այնտեղ

զբաղվում է ուսուցչությամբ, ավանդելով ոչ միայն ղուտ կրոնական առարկաներ, այլ և դասախոսելով Պոբլոպոլի և Դավիթ Անհադ-թի փրկչութիայական գրվածքների մասին, իր գեղեցիկ մեկնաբանությունների շնորհիվ մատչելի դարձնելով դրանք ունկնդիրներին:

Պատեհ առիթից օգտվելով Սիմեոն վարդապետը Պոլսից ուխտի է գնում Երուսաղեմ. այստեղ խոտն բազմության առաջ արուսաս-նած իր ատենաբանությամբ նա այնպիսի հիացմունք է պատճառում այն ժամանակվա Երուսաղեմի պատրիարք Նալյանին, որ վերջինս աչդ հիացմունքի ու զարմանքի խորը տպավորության տակ իր փրկոնք, մատանին ու դավազանը նվիրում է նրան: Պատմում են, որ Երուսաղեմ ժամանած ուխտավորների մի մեծ բազմություն, սքանչանալով Երուսաղեմի միաբան, հաղթանդամ և մեծ միտուք ունեցող Մովսես վարդապետի վրա ու գրավվելով նրա գեղեցիկ արտաքինից, աղերսում է Նալյան պատրիարքին, որպեսզի իրավունք տա Մովսես վարդապետին քարոզ խոսնելու ի միսթարություն. սակայն պատրիարքը, մատնանշելով Սիմեոն վարդապետի վրա, ասում է. «Քարոզ կուզե՞ք՝ Քյոսես, միտուք կուզե՞ք՝ Մովսես»:

1752 թվին Պոլիս վերադառնալով և միառժամանակ այստեղ մնալով Սիմեոն Երեանցին շարունակում է դարձյալ ուսուցչությամբ զբաղվել: 1754 թվի սկզբներին նա վերադառնում է Էջմիածին ու Աղեքսանդր Բյուզանդացի կաթողիկոսի կողմից եպիսկոպոս ձեռնադրվում: Բարձր գնահատելով Սիմեոն Երեմիանցու արժանիքները և նկատի առնելով նրա բյուրեղային անշահախնդրությունը, Աղեքսանդր կաթողիկոսը այս անգամ արդեն նվիրակի պաշտոնով նրան նորից Պոլիս է ուղարկում: Սիմեոն եպիսկոպոսը մինչև 1763 թիվը, ավելի քան ութ տարի, վարում է նվիրակի պաշտոնը: Նվիրակության ժամանակաշրջանում Սիմեոն եպիսկոպոսը կարողանում է մոտիկից ծանոթանալ Թյուրքահայերի միճակին, ուսումնասիրել օսմանյան պետության ու հայ եկեղեցու հարաբերությունները, ամիրաների խաղացած դերը և այլն:

Սիմեոն եպիսկոպոսի համբավը օրեօր աճում ու տարածվում էր, այնպես որ, երբ 1763 թվին նվիրակությունը վերջացրած լի-

նելով Ս. Էջմիածին է վերադառնում և մասնակցում հենց նոր վախճանված Հակոբ Շամախցի կաթողիկոսի հուղարկավորությանը, Էջմիածնում կաթողիկոսական ընտրության համար գումարված ժողովը կաթողիկոս է ընտրում նրան: 1763 թվի ապրիլին տեղի է ունենում Ամենայն Հայոց նորրնտիր կաթողիկոս Սիմեոն Երեանցու օծումը:

Մի հետագարձ հայացք նետելով Սիմեոն Երեանցու գործունեության վրա, մինչև կաթողիկոս ընտրվելը, տեսնում ենք, որ նա վերին աստիճանի պատրաստված մարդ էր և արժանի կաթողիկոսական դահի վրա բազմելու: Նա աշխարհ տեսած մարդ էր. երկու տարիներ ապրելով պարսկական բռնապետությունից հեռու, նա ծանոթացել էր հնդկահայերի բարեկեցիկ ու ապահով կյանքի հետ, որը երբեք չէր կարող համեմատվել սարգարների բռնության տակ հեծող հայ ժողովրդի կյանքի հետ: Նա մոտ հարաբերություններ մշակեց հնդկահայերի ազդեցիկ շրջանների հետ, իսկ վերջիններս էլ բարձր գնահատելով Սիմեոն Երեանցու շիտակ հայրենասիրությունն ու եկեղեցասիրությունը և իդեալականության հասնող անշահախնդրությունը, հետագայում մեծապես օգնեցին նորրնտիր մեծագործ հայրապետին Ս. Էջմիածնում տպարան և թղթի գործարան հիմնելու գործում: Երկար ժամանակ Պոլսում ապրելը, Զմյուռնիա, Երուսաղեմ այցելելը, եվրոպացիների հետ շփում ունենալը նպաստեցին մեծ չափով նրա մտահորիզոնի ընդարձակմանը և կյանքի փորձ ձեռք բերելուն: Նա մոտիկից ծանոթացավ Թյուրքահայաստանում առհասարակ, և Պոլսում հատկապես, հայ-լուսավորչական եկեղեցու հավատացյալների շրջանում կաթոլիկ եկեղեցու կողմից տարվող պրոպագանդայի, հավատորսության և հայ հավատացյալների կաթոլիկ եկեղեցու գիրկը ներգրավելու ամենատեսակ փորձերի հետ: Այս ծանոթությունը ևս օգտակար հանդիսացավ հետագա նրա գրական-եկեղեցական գործունեության համար: Այսպիսի մեծ պատրաստականության ու հարուստ փորձի տեր լինելով Սիմեոն Երեանցին բազմում է Ամենայն Հայոց հայրապետական դահի վրա:

ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆՏՐՎԵԼՈՒՅ ՀԵՏՈ

(1763-1780)

Կաթողիկոս ընտրվելուց հետո Սիմեոն Երեանցու առաջին գործը լինում է Մայր Աթոռը պարզաճ բարձրության վրա դնել, պայծառացնել և ազդեցիկ դարձնել թե օ-

տարների և թե յուրայինների աչքում: Սիմեոն Երեանցու կաթողիկոս ընտրվելուց առաջ Մայր Աթոռը պարիսպներ չուներ. նրա բոլոր շենքերը, ինչպես և կաթողիկոսարանն ու

միաբանների խցերը բաց էին շրջակայքում միատող օտարազգի թափառաշրջիկ ցեղերի և բոլոր տեսակի գողերի ու ավազակների առաջ. սրանք թալանի սիրահար լինելով, հաճախակի հարձակումներ էին գործում Մայր Աթոռի շենքերի ու միաբանների բնակարանների վրա և անասելի նեղություններ պատճառում մինչ այն աստիճան, որ կաթողիկոսն ու միաբաններից շատերը ամառները գալիս, ապավինում էին Երևան ու մինչև ուշ աշուն մնում այնտեղ:

Սիմեոն Երևանցին վճռում է միանգամ ընդ միշտ վերջ դնել գողերի ու ավազակների անվերջ կրկնվող սասպտակություններին: Նա Մայր Աթոռի շուրջը քառակուսի ձևով ամուր ու բարձր պարիսպներ է կանգնեցնում մեծ բուրգերով ու դիտանոցներով, որոնք պահպանվել են մինչև մեր օրերը: Պարսպապատումը Մայր Աթոռի բոլոր շենքերը ապահով վիճակում է դնում. վերջ է դրվում գողերի ու ավազակների տանձարձակ կողոպուտին: Սիմեոն կաթողիկոսի մահվանից հետո էլ նրա կառուցած պարիսպները անգնահատելի ծառայություն են մատուցում, հատկապես այն խռովահույզ ժամանակաշրջանում, որն ընդգրկում է 1780-1827 թվականները, երբ Արևելյան Հայաստանը մեծ ու փոքր պատերազմների թատերաբեմ էր դարձել: Թե որքան բարեբաղ ազդեցություն ունեցավ արտաքին մեծ պարիսպների կառուցումը, կարող ենք տեսնել «Ջամբուռ»-ում բերված վկայությունից: «Ջամբուռ»-ի շարունակողը դրում է, թե նրա ժամանակ «Մուրք Աթոռը Աստուծո շնորհիվ լի էր ամեն տեսակ հողեկոր ու մարմնավոր բարիքներով թե ներքուստ և թե արտաքուստ, բեռնակիր, լծկան ու կթելի անասուններով բազմապատիկ ալելի, քան առաջները, միաբանները շատ հանգիստ և ապահով ամեն բանում»:

Սիմեոն Երևանցու երկրորդ մեծ գործը լինում է Վաղարշապատ գյուղի տեղափոխությունը: Մինչ Սիմեոն կաթողիկոսը Վաղարշապատ գյուղի տները խառնիճաղանձ կերպով շրջապատելով Մայր Աթոռը՝ զրկում էին նրան իր վեհատեսիլ գեղեցիկությունից: Սիմեոն կաթողիկոսը ամբողջ գյուղը տեղափոխում է Մայր Աթոռի հյուսիսային կողմը, միաժամանակ բավականաչափ ազատ տարածություն թողնելով վանքի ու գյուղի միջև թե՛ ճանապարհի և թե՛ հրապարակի համար: Գյուղի ամբողջ տեղափոխությունը Մայր Աթոռի հաշվին է կատարվում, նոր տեղում գյուղացիների համար տներ կառուցելով: Գյուղի նոր վայրում կառուցվում է

նաև եկեղեցի, որը մինչև օրս էլ գոյություն ունի:

Այս բոլորից հետո Սիմեոն կաթողիկոսը իր շինարարությունը կենտրոնացնում է վանքի պարիսպներից ներսը: Նախ նորոգում է Մայր Տաճարի ամբողջ տանիքը և սրբատաշ քարով ծածկում. ընդարձակում է կաթողիկոսարանը, կառուցում նոր շտեմարաններ, ամառային սեղանատուն, մոմատուն, դպրատներ ամառվա ու ձմեռվա համար: Կարգավորում է Մայր Աթոռի բակով անցնող սուլի ջրերի ընթացքը, Մայր Տաճարն ու հարակից շենքերը ազատելով խոնավությունից: Սիմեոն կաթողիկոսի օրով Ս. Էջմիածնում հիմնադրվում է տպարան ու թղթի գործարան, որոնց մասին խոսք կլինի քիչ հետո:

Բայց Մայր Աթոռի հաստատուն խաղաղության համար պարիսպները դեռ բավական չէին, պետք էր Մայր Աթոռի գոն անմիջական շրջակայքը ապահով ու ազատ դարձնել ամեն տեսակ բախտախնդիրներից ու ավազակաբաղ ջեղճից: Նախորդ երկու տասնամյակում մի քանի թափառական ցեղեր, օգտվելով երկրի ընդհանուր խառնակ վիճակից, փորձեր էին անում մըշտական բնակություն հաստատելու Մայր Աթոռի հարավային կողմը տարածվող հողերում: Դորոտներում: Այդ ցեղերը դարձնում ու ամառը անց էին կացնում Արագածի հովասուն վայրերում, իսկ այնուհետև դաշտավայր իջնելով գրավում էին վանքապատական այդ հողերն ու անարգել կերպով կողոպուտներով և ավազակություններով զբաղվելով մեծ նեղություններ պատճառում թե՛ Մայր Աթոռի միաբաններին և թե՛ Վաղարշապատ գյուղի բնակիչներին, որոնք այդ հողերն օգտագործում էին որպես արոտատեղի: Արիասիրտ հայրապետին հաջողվում է այդ ցեղերին վանքի շրջակայքից հեռու վանելով Մայր Աթոռին վերադարձնել հողերը և այսպիսով ապահով դարձնել նաև ճանապարհների երթևեկությունը հարավային կողմից:

Նույնն էր և Օշական գյուղի վիճակը. Օշականը, որ ի բնե հայկական գյուղ էր, սակայն ավազակաբաղ մի ցեղ երկար ժամանակ բռնությանը գրավել ու տեղացի հայ բնակիչներին էլ հալածական էր դարձրել: Սիմեոն Երևանցին մեծ ջանքեր գործադրելով կարողանում է այդ անկոչ նորաբնակներին հեռացնել Օշականից, ցրված հայ բնակիչներին վերստին վերադարձնել իրենց հայրենի օջախը և այս պատճառով ու նվաճելով:

րական վայրը շենացնելով անարատ պահել
Մեծաբան Մաշտոցի դամբարանն:

Սիմեոն Երեւանցու սրտոն աշխիւ չի վրի-
պում նաև անարգութեան մատնեմը՝ Խոր-Վի-
րապի վանքը. վաշխատուն մի ցեղ, իր
անատուններով հանդերձ, գրավել էր վանքի
իր հարակից շինություններով և գոմանոց
ու անոռ դարձրել դրանք: Երգարի հայ-
րապետին հաջողվում է այս վանքն էլ
անգտնել. այնտեղ հաստատվում է միաբա-
նություն, նշանակվում վանահայր և այսպիսի
սով Գրիգոր Լուսավորչի անվան հետ կապ-
ված Հայաստանի այս մեծ սրբավայրն էլ
նորից շինանում է:

Մեզ շատ հեռուն կտանի Սիմեոն Երեւան-
ցու այս ուղղությամբ կատարած բոլոր մե-
ծագործությունների մեկ ան մեկ հիշատա-

կումը. նրա վեհ հոգին ու ազնիւ սիրտը չէին
կարող հանդուրժել, որպեսզի հայրենի աշ-
խարհի պանծալի հին հիշատակարանների
օտարների ձեռքին մնան անարգված վիճա-
կում և բնիկ հայկական գյուղերի բնակիչնե-
րը իրենց հայրենի օջախներից բռնությամբ
վտարված լինելով աստանդական կյանք վա-
րեն: Եւ ինչպես Մայր Աթոռում կարգ ու կա-
նոն հաստատեց, վանքը բարեկարգ վիճա-
կում դնելով, այնպես էլ աշխատում էր ամե-
նայն համառությամբ կարգ ու կանոն հաս-
տատել նաև վանքի մոտավոր ու հեռավոր
շրջակայքում: Բնավորությամբ վճռական ու
անհողորդ լինելով նա իր մտադրություննե-
րի մեծ մասը ի կատար էր ածում ամենայն
կրթությունամբ ու ծրայանությամբ:

ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՐ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻ ՀԵՏ

Պատմական հանգամանքների բերումով
բազմաթիւ հայեր հետզհետե գաղթելով բը-
նակություն են հաստատում Ռուսաստա-
նում: Ժամանակի ընթացքում սրանց թիվն
այնքան է մեծանում, որ կարիք է զգացվում
հատուկ առաջնորդի նշանակման: Սկզբում
պառաջնորդանիստ քաղաք էր հանդիսանում
Աստրախանը, ուր համեմատաբար շատ հա-
յեր կային: Հետագայում բազմաթիւ հայեր
բնակություն են հաստատում նաև ռուսական
այլ քաղաքներում և հատկապես Պետերբուրգ
և Մոսկվա մայրաքաղաքներում: Պետերբուր-
գում բնակություն հաստատած շատ հա-
յերը անատուններ շուտով աշխիւ դարձնող տեղ
են գրավում, շփման մեջ մտնելով արքունի-
քի և բարձրատիճան պալատականների
հետ:

Էջմիածնից ուղարկված առաջնորդ Փառա-
կեցի Բարսեղ եպիսկոպոսն իր «ղմայաբարո-
յության» հետեանքով այնքան էր զգվեցրել
իր թեմի ժողովրդին, որ վերջինս հատուկ
խնդրագրով ստիպված է լինում դիմելու ժա-
մանակի Ղազար Զահկեցի կաթողիկոսին,
որպեսզի նա ետ կանչի Բարսեղ եպիսկոպո-
սին ու նրա փոխարեն մի բարեբար ու առաջ-
նորդ ուղարկի: Բայց Ղազար Զահկեցի կա-
թողիկոսը անուշադրության է մատնում ժա-
ղովրդի գանգաւը:

Այս իրադրությունից օգտվելով Գանձա-
սարի կաթողիկոսը իր կողմից մի առաջնորդ
է ուղարկում Ռուսաստան, որը լավ ընդու-
նելություն է գտնում տեղի հայ հասարակու-
թեան կողմից: Այսպիսով Ռուսաստանի թե-
մը ժամանակավորապես դնրա է դալիս էջ-
միածնի Ամենայն Հայոց կաթողիկոսի իրա-

վասությունից և ընկնում Գանձասարի՝ Աղու-
անից կաթողիկոսի իրավասության տակ:

Այսպես էր գրությունը մինչև Սիմեոն Ե-
րեւանցին:

Բազմաշխատ հայրապետը վճռում է այս
առթիւ անմիջական բանակցություններ ըս-
կրնել ռուսաց արքունիքի հետ. նա մի պատ-
ճառաբանված գրություն է ուղարկում Եկա-
տերինա Բ կայսրուհուն և բացատրելով Մայր
Աթոռի ընդհանրական նշանակությունը հա-
մայն հայության համար, խնդրում է էջմիա-
ծնի հայրապետի իշխանությունը վերահաս-
տատել Ռուսաստանի թեմի վրա: Այս գրու-
թյան հետ միասին նա ընծաներ է պատրաս-
տում սրբերի էջմիածնում գտնված մատենե-
րից, զետեղելով դրանք քառակյունի ար-
ծաթյա գեղեցիկ տուփի մեջ, թաղուհուն մա-
տուցելու համար: Միաժամանակ մի քանի
գրություններ էլ ուղարկում է Պետերբուրգում
այն ժամանակ անուն հանած հայ երեւելի-
ներին, որպեսզի սրանք պատշաճ ընդունե-
լություն ցույց տան իր ուղարկված պատգա-
մավորին և օժանդակեն վերջինիս կայսրու-
հուն ներկայանալու:

Սովորություն կար առհասարակ արտաքո
կարգի դեպքերի ժամանակ պատգամավոր
ընտրել արտաքինով աշխիւ ընկնող հոգեւո-
րականների. այս նկատառումով էլ գրու-
թյուններն ու ընծաները Պետերբուրգ տանե-
լու համար կաթողիկոսը ընտրում է Թիֆլի-
սեցի Դավիթ վարդապետին, որը էր «այլ
գեղեցկադէմ, լայնադիր և կարմրախայլ ե-
րեսօք և թաւարծի խիտ անճալ մորուքօք և
գարմանակար պատկերով, հարմարադէպ
և բարեբարոյ բարուքօ»:

Դավիթ վարդապետն էջմիածնից ճանապարհվում է 1766 թ. օգոստոսին. ուղևորության ընթացքում նա երկար կանգ է առնում Աստրախանում իր առաքելության հետ կապված գործերով և ապա ճանապարհը շարունակելով հանում է Պետերբուրգ ու ընդունվում կայսրուհու կողմից: Կայսրուհին սիրով ընդունելով Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամավորին՝ կատարում է կաթողիկոսի բոլոր խնդիրները. նաև մի շարք թանկագին նվերներ է ուղարկում Մայր Աթոռի ու կաթողիկոսի համար: Եկատերինա Բ. կայսրուհին մի առանձին հրովարտակով էլ կարգադրում է, որպեսզի Ռուսաստանի թեմը ճանաչվի Ամենայն Հայոց կաթողիկոսի իրավասության ներքո. կայսրուհին միաժամանակ հույտարարում է, որ Ռուսաստանի հովանավորությունն աշուհետ մշտական կլինի ինչպես պատրիարքական Մայր Աթոռի, այնպես էլ համայն հայ ազգի նկատմամբ: Սույն հրովարտակը դրվել է 1768 թվի հուլիսի 30-ին: «Այս թուականը,—գրում է Մ. արքեպիսկ. Օրմանյանը,—կրնանք նկատիլ իբրև հիմն և արժատ այն սերտ հարաբերության, որ հաստատվեցաւ Հայոց կաթողիկոսութեան և Ռուսաց կայսրութեան միջև, և որ յառաջանալով և աճելով հանգեցաւ ռուսական տիրապետութեան Հայաստանի մի լաւ մասին և հալութեան մի լաւ կէսին վրայ»:

Սիմեոն կաթողիկոսը, վերին աստիճանի դոհ մնալով պատգամավորության արդյուն-

ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ՈՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ. ՆՐԱ ԲԱՅԱՍՏ ՏՊԱՐԱՆՆ ՈՒ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Սիմեոն կաթողիկոսը ուսումնասիր մարդ էր. ինչպես տեսանք, նա երիտասարդական հասակից սկսած սիրում էր ուսուցչությանը՝ դառնալով և կրթված սերունդ պատրաստել, ինչպես օրինակ Պոլսում: Կաթողիկոս օծվելով նա իր ուշադրությունը առաջին հերթին կենտրոնացնում է Ս. էջմիածնի դպրոցի վրա. զանազան տեղերից նշանավոր ուսումնազետ մարդիկ է հրավիրում էջմիածնի ղեկավարողում պաշտոնավարելու համար: Նրա կազմակերպած դպրոցից հետագայում նշանավոր հոգևորականներ են դուրս գալիս, որոնցից կարող ենք հիշել ռուսահայերի մեջ հռչակ հանած Ներսես Աշտարակեցուն, Հովսեփ Աղուբյանին, Եփրեմ Ջորագեղեցուն և այլն:

Սեանձնահատուկ ուշադրության արժանի է Սիմեոն Երևանցու գրական գործունեությունը: Նա սիրում էր գրականությունը՝ ըզբաղվել. նրա աշխատություններից հատկա-

զից, միսիթարվում է գալիք ապագայի գեղեցիկ հեռանկարով: Ինչպես տեսանք կաթողիկոսը աշխարհ տեսած մարդ էր, նա ճաշակել էր իր ժողովրդի հետ միասին այն բոլոր դառնությունները, որոնք անպակաս էին պարսկական ու տաճկական տիրապետության օրոք. նա ամեն պատեհ առիթից օգտվելով իր ներքին դժգոհությունն ու դարձյալն էր արտահայտում տիրող դաժան այդ իրականության հանդեպ. նա տեսել էր հնդկահայերի վայելած ազատությունները և շարունակ լսում էր հայ ժողովրդի Ռուսաստանում վայելած անդորր կյանքի մասին, որը չէր կարող համեմատվել Արևելյան ու Արևմտյան Հայաստանում տիրող անօրինակ բռնությունների ու կամայականությունների դաժան իրականության հետ:

Պատմական դեպքերի զարգացման հետևանքով ռուսական տիրապետության սահմանները հետզհետև ընդհուպ մոտենում էին Անդրկովկասին և հեռու չէր այն լուսաշող օրը, երբ սարգարական անարգ լուծը իսպառ պիտի վերանար հայ ժողովրդի արևելահայ հատվածի վրայից: Սիմեոն կաթողիկոսը շտեմալ այդ երջանիկ օրը, որը համարյա կես դար հետո եկավ, բայց նա ոգևորված էր գալիք երջանիկ ապագայով ու դեռ ռուսաց արքունիքի հովանավորության տակ չմտած՝ դրեց այն մաղթանքը, որը ռուսաց կառավարության Անդրկովկաս մուտք գործելուց հետո կայսերական տոներին կատարվում էր հայ եկեղեցիներում:

պես մեծ նշանակություն ունեն «Ջամբռ» կոչված աշխատությունը և բարեփոխված մըշտական տոնացույցը: Մնված լինելով Երևանում և մանկությունից սնվելով Ս. էջմիածնում, նա միշտ էլ ականատես է եղել պարսկական սարգարական իշխանության անլուր կամայականություններին ու բռնություններին: «Ջամբռ»-ի հառաջաբանում, խոսելով Մայր Աթոռի դրության մասին, սրտի ամենայն դառնությունը նա արձանագրում է. «Ըստ անուանն՝ իշխող բազմաց, ըստ գործոյն՝ և ոչ միոյ, ի լեզուս՝ ունող ամենայն բարեաց, և ի հինքն՝ կարօտ յամենայնի: Գտանեցեալ ընդ իշխանութեամբ անիշխան տէրանց խստասրտաց և գաղանաբարոյից յաիշտակողաց, և ինքն անզօր և անսուբ: Նպատակ՝ բուռն և ամենակերպ պահանջողաց իւրայնոց և աշխարհոց. և ինքն կամատուր և երկիւղիւ մուրացող»:

Քաղաքական հեղհեղուկ վիճակը իր կը-

նիքն էր դրել Մայր Աթոռի վրա. գոյութիւն շոճներ կանոնավոր դիման, չկար ելնամից մատչան, և ոչ էլ հաստատուն կալվածագրի-րի, արքունի հրովարտականի հավաքածու, այն ամբողջ ունեցվածքի վերաբերյալ, որին տիրում էր Մայր Աթոռը: Անխոնջ հայրապե-տը այս գործին էլ է ձեռնամուխ լինում և փոշիների տակից ու զանազան անկյուննե-րից կարողանում է ի մի հավաքել Մայր Ա-թոռի ունեցած բազմաթիւ կալվածների ու ունեցվածքների պաշտոնական թղթերը, կալվածագրերը, շահերի ու սարգանների շը-նորհած արտոնագրերը, մի խոսքով այն բո-լոր փաստաթղթերը, որոնց վրա հենված Մայր Աթոռի գահակալները կարող էին ա-պացուցել իրենց տիրապետութեան օրինա-կանութիւնը: Այնքան էր տարված նա այս գործով, որ «Ջամբռ»-ի հառաջաբանում ար-ձանագրում է. «Ժմ ամբողջ կյանքում ինձ հա-մար սա մեծ հոգս ու ցավ էր», իսկ ձեռք բե-րածների համար ասում է, որ մեծ տաժա-նութեամբ ու շատ դժվարութիւններով է ձա-րել: Նա իրենից հետո կաթողիկոսական գահ բարձրացող գահակալների վրա պարտակա-նութիւն է դնում սրբութեամբ պահպանելու իր ձեռք բերածներն ու հավաքածները, նը-րանց վրա ավելացնելով նոր ստացվածները: «Ջամբռ»-ը լույս է տեսել 1873 թվին, հեղի-նակի մահից համարյա 100 տարի հետո. նա մի գիրք է, «որ կոշի յիշատակարան ար-ձանացուցիլ, հայելի և պարունակող բնակից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շըր-ջակայից վանօրէիցն»: «Ջամբռ»-ի մեջ հիշա-տակված են մեզ համար շատ հետաքրքիր, իսկ իր ժամանակի գործիչների համար չա-փազանց վրդովեցուցիչ դեպքեր: պարսկա-կան սանձարձակ կոմսայականութիւնների երկրում նախորդ իշխողի կողմից տրված կալվածագիրը և նույնիսկ շահի կողմից տրված հրովարտակը հաջորդ իշխողների կողմից վավերական չէր ճանաչվում, մինչև որ կրկնավավերացման չենթարկվեին դը-րանք. իսկ կրկնավավերացումը կապված էր մեծամեծ կաշառքների ու ծախսերի հետ: Եղել են դեպքեր, երբ միևնույն կալվածագի-րը ստիպված են եղել հինգ-վեց անգամ վավերացման ենթարկել տալ:

Երկրորդ նշանավոր գրական աշխատու-թիւնը նրա բարեփոխած տոնացույցն է: Սիմեոն Երևանցու ժամանակ, և դեռ նրանից էլ առաջ, կաթողիկ հայերը արեւմուտքում օ-րացույցներ էին տպագրում և հայոց եկեղե-ցու տոներն էլ նրանց մեջ աղավաղված ձե-վով մտցնելով, տարածում էին հայ ժողո-վրդի մեջ. այս երևույթը տեղիք էր տալիս

մեծ շփոթութիւնների և հարմար առիթ ծա-ռայում հավատորոշութեան համար: Միամիտ շատ հավատացյալներ մոլորվելով հեռանում էին իրենց հարազատ եկեղեցուց ու օտար եկեղեցու գիրկը նետվում: Այս ցավալի երևույթը չէր կարող վերաբեր մեծա-դործ հայրապետի ուշադրութեան: Իր կազ-մած տոնացույցի վերջաբանում, արդար զայրույթով լցված արեւմուտքից ուղարկված հավատորանների դեմ, որոնք իբր թե բարեար-րութիւն են անում հայ ազգին ամեն տարի նրա համար օրացույցներ հրատարակելով, նա բացականչում է. «Միթե մենք այնքան անկյալ վիճակում ենք գտնվում, որ մի օրա-ցույց էլ չկարողանանք հրատարակել, այլ կարիք ունենանք օտարամուկների կազմած «թուացույցով» դեկավարվելու». և այնուհե-տե տխրութեամբ ավելացնում է. «Պարզ բան է, նրանք բոլոր հնարավորութիւններն ու-նեն իրենց սև գործն առաջ տանելու. ապ-րում են քրիստոնէյա թագավորների իշխանու-թեան ներքո, ազատ բռնութիւններից և ծանր հարկերից. ունեն գործավորներ, վար-պետներ, բանվորներ ու ինչ ուզում են, հեշ-տութեամբ տալի են տալիս և քառապատիկ ու հնգապատիկ թանգ գնով ծախում մեր խեղճ ժողովրդի վրա»: Այս տողերը գրելիս նա միշտ աչքի առաջ է ունեցել Մայր Աթոռի և հայ ժողովրդի անտանելի կացութիւնը օ-տար բռնակալների իշխանութեան ներքո:

Բայց և այնպես ոգեշնչված պայծառ ա-պագայի հեռանկարով, արհամարհելով շըր-ջապատի խավարն ու մոռալ իրականութիւ-նը, Սիմեոն Երևանցին համարձակ կերպով նախաձեռնում է տպարանի ու թղթի գործա-րանի հիմնադրման աշխատանքներին:

Ս. Էջմիածնի գահակալները միշտ էլ գնա-հատել են տպագրութեան գլուտը և նրա ըն-ձեռած առավելութիւնները, բայց պարսկա-կան դաժան իրականութեան պայմաններում անհնար էր տպարանի կազմակերպումը, և առավել ևս թղթի գործարանի հիմնադրումը. դրա համար էլ նրանք ստիպված էին երկրի սահմաններից դուրս, հեռավոր Ամստերդա-մում, Լիւդորնոյում, Պոլսում և այլուր հայե-րի կողմից հիմնած տպարաններում տպա-դրել տալ իրենց ցանկացած գրքերը: Սիմեոն կաթողիկոսի օրով թեպետ պարսկական դա-ժան իրականութիւնը չէր փոխվել, այլ նույ-նիսկ ավելի վատթարացել էր, բայց երջան-կահիշատակ հայրապետը հնդկահայերի աջակցութեամբ կարողանում է Ս. Էջմիած-նում տպարան կազմակերպել 1771 թվակա-նին և գրքեր տպագրել: Տպագրութեան հա-մար պահանջվող թուղթը բերվում էր արե-

մուտքից՝ Թյուրքիայի վրայով, նրա փոխադրությունը մեծամեծ ծախսերի ու դժվարությունների հետ էր կապված. հաճախ թղթի բեռները ավազակների կողոպուտի ապրկա էին դառնում, ավազակներ, որոնք շարունակ վխտում էին երկրի բոլոր ճանապարհների շուրջը: Թղթի հայթայթման գործը հեշտացնելու համար Սիմեոն Երեանցին վճռում է էջմիածնում թղթի գործարան կա բանալ: Արևմուտքից օտարազգի վարպետներ է բերել տալիս նա Ս. էջմիածին և մեծ դժվարություններով 1776 թվին կարողանում է ավարտել թղթի գործարանի սարքավորումը: Հիշատակության արժանի է այն իրողությունը, որ արտասահմանից եկած վարպետները սկզբում մտադրություն են ունեցել փողերի ստանալ ու փախչել, բայց աշալուրջ հայրապետը պարսկական ֆալսխկալով պատժի ենթարկելու և սառցատանը բանտարկելու սպառնալիքով նրանց ստիպել է մնալ, գործարանը գործի դնել ու տեղացի հայերից վարպետներ պատրաստել: Հենց այս գործարանում պատրաստված թղթի վրա էլ իր հիմնած տպարանում տպագրել է տալիս նա իր կազմած նոր տոնացույցը: Դժվար է նրկարագրել, թե ի՞նչ հոգեկան ուրախություն է պատում լուսամիտ հայրապետին, երբ իր սեղանի վրա տեսնում է բազում տղանություններով ձեռք բերված իր այդ անդրանիկ երախայրիքը:

Բայց թղթի գործարանը երկար կյանք չունեցավ. նա շինված էր վանքի պարիսպներից դուրս, արևմտյան կողմը, երբ Սիմեոն կաթողիկոսի մահից հետո (1780 թ.) Արարատյան աշխարհը նորից ասպատակությունների ասպարեզ է դառնում, թղթի գործարանն էլ ավերվում ու թալանվում է վանքի շրջակայքում վխտացող ավազակների կողմից. գործարանի երկաթե ու պղնձե գործիքները, որոնց արժեքը նրանք անընդունակ էին հասկանալու, վալրագարար ոչնչացվում են, մեծ սուգ պատճառելով Մայր Աթոռի նոր գահակալին ու միաբաններին, իսկ տրպարանը, որ կառուցված էր վանքի պարիսպներից ներս, շարունակում է պահպանել իր գոյությունը:

Մենք շատ համառոտ ձևով տվինք Սիմեոն Երեանցու գործունեության պատմությունը, բայց այսօրվան էլ բավական է պատկերացում կազմելու համար, թե որքան բազմակողմանի ու բեղմնավոր է եղել նրա գործունեությունը: Նա իր ողջ կյանքը նվիրել է Մայր Աթոռի բարեկարգմանը: Սիմեոն Երկվանցին ամենայն իրավամբ համարվում է մեր աշխի ընկնող կաթողիկոսներից մեկը:

Ինչպես վերը հիշեցինք, Սիմեոն Երեանցին վախճանվում է 1780 թվին, հուլիս ամսում, և թաղվում Ս. Գալիանեի վանքի բակում, նրա արևմտյան կողմը:

